

Հասարակութիւն Ալեքանդր գեղջ	0.
Հասարակութիւն Հախլերիս գեղջ	50
Հասարակութիւն Խալիպու գեղջ	10
Հասարակութիւն Խօշխարար գեղջ	20
Հասարակութիւն Իգորիմուայ գեղջ	10
Հասարակութիւն Բհարու գեղջ	15
Հասարակութիւն Բլուր գեղջ	17
Հասարակութիւն Փանիկ գեղջ	30
Հասարակութիւն Լեզիկար գեղջ	25
Հասարակութիւն Ալեկու գեղջ	25
Հասարակութիւն Թեջրու գեղջ	10
Հասարակութիւն Տաշուուուն գեղջ	7
Հասարակութիւն Ալեկու գեղջ	20
Հասարակութիւն Ալեկու գեղջ	3
Հասարակութիւն Ալեկու գեղջ	10
Հասարակութիւն Հիւսէյնի գեղջ	5
Հասարակութիւն Ղազուղչաղ գեղջ	10

(5 - 1 - 1 - 1 - 1)

Հետեւեալը անկողմնակալ ողով կը հրատարակեմք, պատասխանատուութիւնը թողով նամակագիր Պ. Ա. Գուլամիրեանցի վերայ:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Ի ՎԵՐԱՅ ՀՐԵՏԱՐԱԿԵԱԼ ԹԱՏՐՈՆԵԱԿԱՆ
ՅՕԴՈՒՆՏՈՅ «ԱՐԱՐԱՏ» . . . ԱՄՍԵԳՐՈՅ

յերես 253 և 254 թիւ Ժ. այսր ամի:

Թիւ 12-է մանջը, լաւ միտ-
մայր, և ոչ իւր նրան, որոց
համար քաղցր է հասարակու-
նէան օգնար:

Իրան է, որ այս առթիւ շատերուն պնդու-
թոյ պիտի երեւաւ, սակայն դարձեալ պիտի
շարունակեմ ծամբաս, ո՛ր որ երթալու հա-
մար ծնած կմ, աղտընորդ ունենալով ինն,
սա հետեւեալ յորց միմ պաշտպաններս, —
ՍԻՐՏ, ԽԻՂՃ, ՃՏՄԱՐՏՈՒԹԻՒՆ, և ՊԱՐ-
ՏԱՆՈՐՈՒԹԻՒՆ: "Ալիկիկայ" 1867.

Անցեալ 24ին նոյեմբերի 1869 ամի ուղարկե-
ցինք . . . Խմբագրութեան Արարատ
Ներկանու Հայոց թատրոնական ընկերութեան

վրայ խօսակցութեամբ տեղեկութիւնները — Հան-
գերձ և մերս նուաստութեան հաստատ իրաւուն-
քով զրուածքը" և որը որ . . . Խմբագրու-
թիւնը պատուականագոյն ամսագրոյ՝ խոհանու-
թեամբ մի քանի ազգութեան յայտնեց ըն-
կերութեանը, որ բարեհաճին հաշիւ ներկայացնել
տեղական Յաջորդին կամ Վոնսիստորիային (տես
երես 136 դեկ. 1869). վերջապէս՝ այս մի քանի
տող զրուածքը Ընկերութեան վեհանաժողովը
այն աստիճանին վերադարձեց, որ մինչև անգամ
իրենց կողմնապաշտների հետ ինչ տեղ որ պա-
տահում էին, Պարսկական հին խաների նման իրենց
Մասիսի, Վաղբէկի (ահագին լեռների) զուխներն
բարձրացուցանելով՝ ասում էին, թէ՛ « ինչ իրա-
ւունք ունի Գուլամիրեանցը մեզինց հաշիւ պա-
հանել տայ. մենք գիտենք ինչ կանենք, կանենք
նրան՝ ինչ և ժողովուրդին՝ ինչ որ խօսում են մեզ
վրայ, երբոր մեր քրանքի աշխատութիւնն է . . . »
և այլ մի քանի անվայել խօսքեր. ի վերջոյ՝ որ-
պէս թէ մենք՝ մեր արածն արեցինք, հաշիւը իբր
պահանջել տուցինք բայց ա՛խ ինչ
հաշիւ, միանգամայն պարզ ասել, չէր հաշիւ
և որը որ ահա այս օրերս կարդա-
ցինք բարեկարգարար այս պատուականագոյն Ա-
րարատի 10 - ներորդ տետրակին մէջ (յէջ 253 և
254) նոյն ընկերութեան հաշիւը, որով պի-
տի կարողանամ յառաջ տանել մեր զրուածքի
զօրութիւնը, "Տէր է իմ" օգնական և ես ոչ եր-
կեաց, զի՞ արասցէ ինձ մարդ՝ ասելով առնում եմ
զրիւր ահա ձեռքս և խօսում եմ համարձակ հը-
րապարակի դատաստանի առաջ, նախ, ես զար-
մանում եմ Արժանապատիւ Փոխ. — Թեմակալ
Հայր սուրբի վրայ, որ նա ինչ համաձայնութեամբ
ընդունեց թատրոնի խառնաշփոթ հաշիւը, երբոր
նոյն օրը իրեն մօտ՝ ժողովուրդը կողմանէ հրաւի-
րուած մեծապատիւ Պարոնները, այնէ, Գերագին
Յովհաննէս Ղազանեանցը և Մեծապատիւ Պ.
Համարձում Թաղէոսեանը զայրացած սրտով
"չենք խառնուիլ այս հաշիւին" ասելով՝ դուրս է-
ին եկել Աղնուուհի Տեսուհւոյ հետ (*) սենեկից:

(*) Այնէ, Տեսուհին և Կատարարուհին Օրիոր-
դոց Աւստմարանին Հայոց Գերագինուհի Տիկին Սո-

Թողնելով մի միայն ջերմեռանդ և Ազգասեր ընկերությունը, վերջապես՝ հաստատունը մեր ասածը— ինչպես որ գրում են ջերմեռանդ ընկերությունը իրենց հաշուին մեջ, որի խոստանձ իրենց ձեռքով գրում են և անհամար ուղղում ենք, Թե՛ գրամների մեջ և թե՛ մանկալ իրերի մեջ, որ աններկի է ընդունել այսպիսի հարձակում հաշիւներ, անցած է արդէն մեր ձեռքը (*) այսպես, թե՛ "Ցանկամ (ուժն) ներկայացմունքից եղև միմիայն 810 բուրլի (զարմանալի ուղղութիւն առանց կողմէի)։ Շատ բարի պարտքներ, ահա սորա պատասխանը մի՞թէ մոռացել էք 2եր անցեալ տարուան այս պատուականագրոյն Աշխարհի ԺԲ. տետրակին մեջ՝ յէջ 172 ապրիլ ամսին հրապարակաւ խոստումներ, թե՛ "Առ այժմ այս երեք անգամի ներկայացմունքը՝ որ գումարեց 600 մանէթի չափ, գրեթէ թատրոնական անհարմար և այլն պարագայից բոլոր ծախքերը վճարեց, զոր արած էր առանց տոկոսեաց՝ Երևանցի Պ. Մկրտիչ Եովհաննէսեանց, եւ յետ այսորիկ ներկայացմանց արդիւնքները պիտի մնան Բաղրի յօգուտ երկուսն զարգացող Հայոց քաղաքին"։ Այժմ խոհեմութեամբ հարցնում ենք 2եղ Պարոններ, որ՝ եթէ 3 անգամի ներկայացմունքը գումարեց 600 մանէթի չափ (զիցո՛ւք մի 5 կամ 10 մանէթ պակաս), ապա միւս 5 ներկայացմունքը մի՞թէ միմիայն 210 բուրլի եղև (անհաստատել հաշիւ համաձայն 2եր գրութեանը), ուրեմն ամեն անգամը՝ 42 բուրլի՝ եղև (զարմանալի

նայ Մատաղիսները, որի ճշմարիտ եւ եւանդուն հոգատարութիւնը Աստուծոյն, չպիտի մոռացուին երբէք մատաղերամ աշակերտուհեաց սրտերից։ Երանի չէր, որ մեր Գիրապնուռնի Հայ Տիկիները բարի նախանձով վառուած, հասարակութեան օրիորդներին իրենց կարողութեան չափ օգտակար լինէին, եւ այնպէս դէպ ի յառաջ տանելով նոցա քայլերը...

(*) Գտնուածն Աստուծոյ, որ այս ընկաւ մեր ձեռքը, այլ ոչ թէ սրբապիկարը։ Մենք պարմացել ենք այս անճոռնի սեւադրութեան գումարներն յաճախակի փոփոխութեանց վրայ, որովհետեւ ճշմարիտ հոգիների գործը որքան սեւադրութիւն եւս լինի, այնու ամենայնիւ նորայ այստի եկամուտի ու ծախսի պումարները անջնջելի եւ ուղղելի կրնան միշտ։

ման). Ինչ էիք մտածում՝ Պո՛ւր, Պարոններ. հաշիւն պնդաւ կարծում էիք որ Բաղրի միւս տարին պիտի ունենար, կամ պնդաւ դէպ ի երկինք, և կամ օդի մեջ պիտի աշխարհէր. ո՛չ, ո՛չ, Պարոններ. այդ կարծելով որ գործ էիք սկսում գորան կանն մեր երկրումը՝ էրդ ինչ էրդ ընէիք։

Ահա Պուր ինքնեղբ ինչպէս ճշմարիտ անձինք, որ 3 անգամումը 600 մանէթի չափ օգուտ էիք ժողովել և այս գումարով (ինչպէս գրում էք) թատրոնի բոլոր ծախքերը վճարել ենք, 2եղ համարձակապէս գոչում էք ընդհանուրի առաջ 172 և 173 երեսներումը, թե՛ "ջերմեռանդ և ազգասեր խումբը", այո՛, շատ ջերմեռանդ և Ազգասեր խումբ էիք. ներքեք եղբայրս հարցնելու 2եղ, թե՛ ինչ եղանակով 2եր ջերմեռանդութիւնները, ո՛ր գնացին այժմ 2եր ազգասիրութիւնները. . . .

Ահա, այսպիսի հաշուոյ դէմ՝ ինչպէս որ տեսնում է մեր սիրելի ընթերցողը, Արժանապատիւ Փոխ. — Բեմակալ սուրբ Հայրս, որին որ հոգւով չափ միշտ պատուած եմք և պատուելու եմք, յաւելացնում է իրենց գումարի մեջ մեր պատուոյ դէմ՝ հետեւեալը (տես եր. 253 փետր՝ 1870), թե՛ "կարեւոր համարիմ՝ յարակցել, թե՛ վասն այսուհետեւ տեղի չտալոյ ումեք՝ բամբասել զկառավարին և զընկերս թատրոնական կառավարութեան, և առանց իմանալոյ զստեղծ տեղեկութիւնս հաշուոց չբողբել զնոցանէ. (*) "Խնդրում եմ այժմ ամենախոնարհաբար Արժանապատիւ սուրբ Հօրը, որ ցոյց տայ մեզ, մեր անտեղի խօսալը և գրումները (ու ո՛չ թե՛ բամբասանքը)" նոյն ընկերութեան դէմ և կամ թող մեր նուաստութեանը ցոյց տայ մեր անխնայութիւնը և անստեղծ տեղեկութիւնը հաշուոց, և յայնժամ մի միայն չենք բողբել նրանցից, այլ կրկնենք, Բայց ինչի՞ կրկնենք, երբոր Ամենաբարի Աստուածը մեզ Բաղրի-Մկրտիչի տուեց, Խորհելու, Բաշխելու և Կշեռելու համար՝ Բաղրի և Խորհելու. . . . չէ՛ յայնժամ ևս կասենք ինչպէս որ այժմ՝ ևս ասում ենք, թե՛ թող լուռ մոնջը, լուռ անդամալոյժը, այլ ո՛չ թե՛ եւ, որիս համար շատ քաղցր է իմ Գերապատուելի հասարակութեան օգուտը. . . . Այժմ զննեմք ծախսը—ծախսը ևս զը-

բուժման և հաշվում ուղիղ — 810 բուրլի արծաթ.
— այ բեզ թուարանական մաթեմատիկայի վար-
պետներ. տեսնում են՝ ի նշակու ուղիղ դուրս են
բերել հաշիւը. ահա ինչպէս. 810 բ. մուտք—810 բ.
ծախս, մնացորդ 000 ոչինչ. էսպէս թուարանական
վարպետներին մեզ հարկաւոր է այժմ մեր Ազգին,
և ոչ թէ միւսների նման՝ որ մարդ բան էլայ չի
հասկանում մինչև անգամ 44 կոպէկ $\frac{3}{4}$ կոպէկ
և այլն և այլն. Ի վերջոյ թող քննենք իրերը. 1)
Քաթանի կամ միտկալի և թանդիֆի հաշուել են
Պարոնները 108 բուրլի 91 կոպէկ (լաւ կ'լինէր որ
իրանց արդարութիւնը առաւել ցոյց տալու համար
նշանակէին, թէ քանի թոփ կամ քանի արշին —
վերջապէս մենք այժմ տեսնում ենք ընդ ամենը մի-
միայն մի քրմապետի շապիկ թանդիֆից կարած,
որը որ շատ աւելի եթէ հաշուենք, ընդ ամենն—
2 բուրլի հազիւ լինի. դուրս գալով այս 2 բուրլին՝
մնում է 106 բուրլի 91 կոպէկի քաթանի կամ միտ-
կալ մեր և ամեն ճշմարիտ մարդկանց կարծիքով այս-
քան ահագին գումարը չպէտք է միտուէր միմիայն
քաթանի կամ միտկալի վրայ, պատճառ ահա.
քաթանների կամ միտկալների վրայ նկարուած բա-
ները, որոնք որ թատրոնի ամենամեծ հարկաւորու-
թեան պարագաներ են, որք են ընդ ամենը 19
հատ նեղ 1-1-1, և 9 հատ վարագոյր յետին կող-
մանց, և մի քանի մանր մուներ տեղեր, և մի թէ կա-
րելի է 106 բուրլի 91 կոպէկի հաշուել. — ի նշի չեն
բացարձակ հաշիւ նեկայացրել, և որ ճշմարիտ հային
զարմանք չպէտք է պատճառէ այս ահուկի գումարը
— չենց դիցուք թէ Քաթանի տեղ միմիայն միտկալ
հաշուենք. 106 բուրլի 91 կոպէկէ վին՝ կառնուի 21
թոփ լայն և լաւ միտկալ, թոփը 5 բուրլիով դու-
մարը կ'լինի 105 բուրլի. իսկ մնացեալ 1 բուրլի 91
կոպէկն էլ մի կողմը գնենք. միտկալի թոփի չափն է
33 արշին, որ կ'լինի գումարը 693 արշին, ես կար-
ծում եմ որ այս 693 արշին միտկալով կարելի էր
ամբողջ Ուսումնարանի, Առաջնորդարանի մինչև
անգամ և կոնսիստորիայի պատերը պատել վառա-
ւոր կերպով. այլ ոչ թէ միմիայն վերջինը մի քա-
նի բաներին կ'բաւականանար. 2) Շապիկի թող-
թերի համար (արշիների) գրում են ջերմեանդ Ազ-
գասէները թէ, "շապիկի թղթերին տուինք 56 մա-
նիթ 60 կոպէկ" — հաւաստի Ազգային նորաստեակ

հաշուագէտներ, այս գումարէն պատուիլք՝ կարելի
էր գնել (ինչպէս որ մենք ևս միշտ վաճառում ենք)
պատուական տեսակ արշիներից թոփը 55 կոպէկէն
103 թոփ, որ բաւականանար 10 սենեակի պատե-
րը կպցնելու. հարցնում ենք այժմ այս Պարոններին,
թէ ի նշտեղ բանացրեցին այսքան մեծ գումարի ա-
րշիները որ մեզ չեն երևում, — երեւի անյայտ սեն-
եակներ ունին սրանք — չգիտեմ — մեր կարծիքով
թատրոնի վրայ հազիւ թէ մի 6 թոփ արշի (չպա-
լեր) գնացած լինի՝ այն է 72 արշին. Ա-խ.
. ահա այսպիսի խառնափնդոր հաշիւների դէմ մի-
թէ լռե՞նք. — 3) Խաս կամ խամ չիթերի
հաշուած են Պարոնները 63 բուրլի 90 կոպէկ, բայց
պիտոյ էր նշանակել որքանութիւնը, և ի նշ բանի
վրայ գործածուածը. 4.) Գիկարացի նկարող Պ.
Մկրտիչ Յովհաննէսեանցին գրում են ջերմեանդ
ընկերութիւնը թէ "տուինք 69 բուրլի" — բայց ոչ
69 բուրլի, այլ տուած էք նորան մի ձեռք նոր
զգեստ, որը որ քանի մի մարդկանց վկայութեամբ
40 ռ. էր գնած Պ. Վարդամովից, և ոչ թէ 69 բուր-
լի 5.) Թատրոնին պատկանեալ պարագայից մէջ,
որոնք որ յանձնած են ջերմեանդ Ազգասէները
տեղական Արժ. Փոխանորդին, պակասում են
նա ևս 2 հատ անքիսիկի Շղթայք (*). 1
հատ աղէկայ խաս դերիայ, և 1 հատ նախա-
բարի իւրկայ շալից, որոնք որ հաշուին մեջ դրած են,
և պատկանում են թատրոնին (թէ և Արժանապատիւ
Ս. Հայրը ուշադրութիւն չէ դարձրել թէ հաշուին
և թէ ցուցակին, ի հարկէ վստահ լինելով նոցա
ջերմեանդ Ազգասիքութեան վրայ), Իսկ միւս
մանրամասն հաշիւներին չենք կամենում ուշ դար-
ձնել, տեսնելով նոցա անհամար ուղղութիւնները.
Աւելորդ չեմ համարում յիշել այստեղ և հետե-
ւալը՝ այն է, անցեալ օրը տ'ղեկացանք որ թատրոնի
համար գնած տախտակների փողերն զեռ մինչև
այժմ հատուցած չեն. ուստի տէրերն տախտակ-
ների ասում էին հրապարակի մէջ, "որ կերթանք մեր
տախտակները թատրոնիցը կ'րերենք, եթէ փողերը
չտան, մինչև երբ համբերենք", մենք կրկին և կրկին
զարմանում ենք սոցա բռնած բոլոր գործքերի վրայ.

(*) Այս շղթաները գնած են Ա. Գոլամբերսանցիս
Ծագողինից, 4-ն, 4ր 50 կ. իսկ միւսն 4 բ. 80 կ.
ընդ ամենը 5 բ. 10 կ.)

